ԳԱՌՆԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Ծննդյան թիվն ու վայրը

Ծնվել է 1958թ. Ադրբեջանի ՍՍՀ Դաշքեսանի շրջանի Բանանց գյուղում

Կրթությունը

1986թ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանական բանասիրության բաժին
2003թ. – ԳԴՀ Ջորջ Մարշալի անվան անվտանգության ուսումնասիրությունների եվրոպական կենտրոնում հնգամսյա դասընթաց
2007թ. – ԱՊՀ երկրների հետ տեխնիկական համագործակցության հիմնադրամի դիվանագիտական դասընթաց, Կահիրե, Եգիպտոս
2014թ. – ՉԺՀ կոմերցիայի նախարարությանը կից Միջազգային տնտեսության ակադեմիայի մեկամսյա դասընթաց, Պեկին, Չինաստան

1976-1978թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

Աշխատանքային գործունեությունը

1984-1985թթ., 1987-1988թթ. – ծառայություն և դարի (պարսկերեն) լեզվի թարգմանիչ Աֆղանստանում
1988-1991թթ. – լրագրող, պատասխանատու քարտուղար «Արմենպրես» լրատվական գործակալությունում, Հայաստանի ժուռնալիստների միության անդամ
1991-1992թթ. – ԱԳՆ մամուլի քարտուղար և տեղեկատվության բաժնի վարիչ
1993-1994թթ. – ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության, այնուհետև՝ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության Իրանի բաժնի 2-րդ քարտուղար
1994-1997թթ. – ՀՀ տրանսպորտի նախարարության կառուցվող օբյեկտների տնօրինության Իրանի հետ կապերի գծով գլխավոր մասնագետ՝ Հայաստան-Իրան՝ Մեղրու կառուցվող կամրջում
1997-1998թթ. – ՀՀ Աֆղանստանի պատերազմի վետերանների միության «Մարտընկեր» շաբաթաթերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր
1998թ. – ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության խորհրդական
1998-2001թթ. – ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության խորհրդական
2002-2004թթ. – ԱԳՆ Իրանի բաժնի վարիչ, Հայ-իրանական կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի պատասխանատու քարտուղար

2004-2007թթ. – ԻԻՀ-ում ՀՀ փոխդեսպան, այնուհետև՝ դեսպանության դեսպանորդի պաշտոնակատար
2007-2009թթ. – ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության խորհրդական, Հայաստան-Իրան-Թուրքմենստան միջկառավարական հանձնաժողովի պատասխանատու քարտուղար, ՀԱՊԿ ԱԳ նախարարների խորհրդի Աֆղանստանի հարցերով աշխատանքային խմբի Ազգային համակարգող
2009-2010թթ. – ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության պետի պաշտոնակատար
2010թ. – ԱԳՆ սահմանակից երկրների վարչության խորհրդական
2010-2012թթ. – ԻԻՀ-ում ՀՀ փոխդեսպան
2012-2018թթ. – ԱԳՆ Քաղաքական ծրագրավորման վարչության Վերլուծական բաժնի խորհրդական

Դիվանագիտական աստիճանը

ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար

Պարգևներ

ԽՍՀՄ և Աֆղանստանի կառավարական և ռազմական պարգևներ
ՀՀ ԱԳՆ խրախուսանքներ

Գիտական աշխատություններ

Հեղինակ է Իրանի մասին 5 գրքի և 200 հոդվածի:

Օտար լեզուների իմացություն

պարսկերեն, ռուսերեն և անգլերեն

Ընտանեկան կարգավիճակ

Ամուսնացած է, ունի 2 երեխա, 2 թոռ:

ՀՀ նախագահի ս.թ. նոյեմբերի 19-ի հրամանագրով նշանակվել է Թուրքմենստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան: